ՀՈԴՎԱԾՆԵՐ

XX Դ. ՍԿԶԲԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ Բ. ԿՆՈՒՆՅԱՆՑԻ ԴՆԱՀԱՏՄԱՄԲ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆ

Պրոլետարական շարժման գործիչների զգալի մասը ապրել է գաղափարական զարգացման էվոլյուցիա։ Այդ շարժման սկզբնավորման և հետագա վերելքի շրջանում նրա մեջ ընդգրկված մտավորականությունը, որպես կանոն, ժողովրդադեմոկրատական աշխարհայացքից անցել է դեպի սոցիալիստական, դեպի գիտական կոմունիզմի դիրքերը։ Այդպիսին է եղել նաև Բոգդան Միրզաջանի Կնունյանցի, նրա եղբայրներ Լյուդվիգի և Տիգրանի ու քրոջ՝ Փառանձեմի (Ֆարոյի), կյանքի ուղին։ Այդ իրողությունն արտահայտվել է Բ. Կնունյանցի երկերում։ Հիշելով իր ծննդավայր Շուշիում անցյալ դարի վերջի քաղաքական եռուզեռը, նա գրել է. «Ես կենդանի կերպով հիշում եմ մի դեպք մեր կյանքից, երբ գավառական մի փոքրիկ քաղաքի զրեթե ամբողջ հասարակությունը»[1] մասնակցում էր «Մշակ» և «Նոր դար» թերթերի կողմնակիցների միջև մղվող սուր և սկզբունքային վեճերին։

Ժամանակի առաջադիմական, բուրժուական զարգացման տեսակետի վրա կանգնած «մշակականները» սուր քննադատության էին ենթարկում «նորդարականներին»։ Վերջիններս գտնում էին, թե մեր ժողովրդի ազգային կյանքում կենսական կարևորություն ունի եկեղեցին, քննադատում էին կապիտալիզմը, որն արհեստավորական խավի քայքայման պատճառ էր դառնում։ «Ընդհարումն սկսվեց,— շարունակում է Բ. Կնունյանցը,— հոգևոր սեմինարիայում՝ առաջադիմական ուսուցիչների և սխոլաստիկայի պահպանողական կողմնակիցների միջև։ Վեճն անցավ երիտասարդության ու հասարակությանը և անմիջապես ընդունեց մի յուրատեսակ երանգ. «Մշակի» բոլոր կողմնակիցները դրա հետ մեկտեղ հանդիսացան նաև առաջադեմ մանկավարժների կողմնակիցներ։ «Նոր դարը» իր վրա վերցրեց հետադիմականների պաշտպանությունը»[2]։

Իրենք՝ Կնունյանցները, գտնվում էին առաջին խմբի աչքի ընկնող դեմքերի շարքերում։ Այսպես, 1895թ. նոյեմբերի 1-ի «Նամակ Շուշուց, «Կ-յանց»[3] ստորագրությամբ փոքրիկ հոդվածում խիստ քննադատվում է ժողովրդական կրթության բնագավառում տիրող կամայականությունը։ Այն ժամանակ, նշվում է հոդվածում, երբ չափազանց մեծ է ժողովրդական դպրոցների պահանջը և քիչ նրանց թիվը, հոգևոր նորանոր դպրոցներ են

---

1 Բ. Կնունյանց, Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 32։

2 Նույն տեղում։

3 Ֆ. Մ. Փիզել-Կնունյանցի կարծիքով նշված ստորագրությունը պատկանում է իր եղբայրներից Լյուդվիգին կամ Բոգդանին։

բացվում, որոնց շրջանավարտներն ի վերջո ձեռնադրվում են քահանա և ուղարկվում են գյուղերը, «որոնցում արդեն կան 6—7 տերտերներ»։ «Ամբողջ Ղարաբաղը,— կարդում ենք այնուհետև հոդվածում,— հեծում է տգետ հոգևորականների ձեռքում, մինչդեռ թեմական դպրոցն ավարտածներից շատերը հեռվից սպասում են այդ տգետների աշխատանքի վախճանին, որպեսզի իրենք մտնեն ժողովրդի հոգևոր դաստիարակության բարձր պաշտոնի մեջ»[4]։

Մի քանի ամիս անց Շուշուց ստացված երկու փոքրիկ անստորագիր թղթակցություններում, որոնք ևս, մեր կարծիքով, պատկանում են Կնունյանցների գրչին, մերկացվում են քաղաքի ինքնավարության օրգանների ընտրություններում հարուստ խավի մեքենայությունները և բողոքի ձայն է բարձրացվում թեմական դպրոցներում տիրող տեր-թոդիկյան մեթոդների դեմ[5]։

Հանրահայտ է, որ Բ. Կնունյանցը «Մի քանի խոսք «Մշակի» մասին» հոդվածում խստորեն քննադատում է «Մշակի» ուղղությունը Գ. Արծրունու մահից հետո, որ տեղի ունեցավ 1892թ.։ Իսկ ինչո՞վ բացատրել, որ Կնունյանցները դրանից 3—4 տարի անց թղթակցում էին այդ թերթին։ Դրա բացատրությունը Բ. Կնունյանցը տալիս է նշված հոդվածում. «Արծրունու նման հմուտ ու բարձր տաղանդի տեր հրապարակախոսի կողմից ղեկավարվող «Մշակը» իր շնորհալի ղեկավարի մահից հետո անգամ մի քանի տարի պահպանում էր այն ազդեցությունը, որ թերթը նրա կենդանության ժամանակ ուներ բնակչության առաջադիմական խավերի վրա։ Ամենքն այդ բացատրում էին միայն նրանով, որ Արծրունու ավանդույթները դեռևս ուժեղ էին «Մշակում», որ վերջապես Արծրունու շոշափած հարցերը դեռևս սպառված չէին»[6]։

1903 թ. մարտին լույս տեսած այս հոդվածում Բ. Կնունյանցն ավելի հանգամանալից վերլուծություններ է կատարում հայ ժողովրդի ներքին կյանքի մի շարք կարևոր խնդիրների վերաբերյալ։ Հոդվածն ամբողջությամբ վերցրած ուղղված է ժողովրդական ու բանվորական շարժումների վերելքի պայմաններում հայ լիբերալ բուրժուազիայի, նրա կուսակցությունների և մամուլի օրգանների քաղաքական գծի դեմ։ Հեղինակը նշում է, որ հասարակական կյանքը մեր դարասկզբին մեծ առաջընթաց է կատարել։ Անցել է այն ժամանակը, երբ ֆեոդալիզմի ու կղերականության դեմ ամեն մի ելույթ համարվում էր առաջադիմական, իսկ բուրժուազիայի պահանջները՝ պրոգրեսիվ։ Պատմական անցյալ են նաև այն տարիները, երբ «յուրաքանչյուր ազատ միտք, յուրաքանչյուր բարի, լիբերալ նախաձեռնություն, յուրաքանչյուր առաջադիմական գործ իրեն կապում էր «Մշակի» անվան հետ»[7]։ Կնունյանցը այս ընդհանուր բնութագրի հետևում անշուշտ տեսնում էր տարբեր ուժերի և խավերի ժամանակավոր միասնությունը, որը կազմվել էր կապիտալիզմի վերելքի և ազգային զարթոնքի պահանջներին համաձայն, երբ թերթն արձագանքում էր զարգացման հիշյալ փուլի առաջադրած խնդիրներին և արտա-

---

4 «Մշակ», 11. XII. 1895։

5 Տե՛ս նույն տեղում, 24. II, 20. IV. 1896։

6 Բոգդան Կնունյանց, Ընտիր երկեր, էջ 33։

7 Նույն տեղում, էջ 31։

հայտում կովկասահայ ազգաբնակչության առաջավոր մասի տեսակետները։ «Այդ օրգանի շուրջը,— գրում էր Բ. Կնունյանցը,— այն ժամանակ խմբավորվել էին այնպիսի հակադրություններ, որ ոչ մի հնարավորություն չկա տալու նրանց ընդհանուր բնութագիրը։ Հայերը նրանց բոլորին դասում էին մի կարգի՝ «լիբերալների»[8] շարքը։ Սակայն կապիտալիստական կարգերի հաստատումը, նավթարդյունաբերության բուռն աճը և դրա հետ կապված հարստանալու մարմաջը ջախջախիչ հարվածներ էին հասցրել այդ միասնությանը։ Հին իմաստով «լիբերալներն» արդեն բաժանվել էին տարբեր, երբեմն հակադիր խմբերի և համընդհանուր պահանջների մասին խոսք անգամ լինել չէր կարող։ 1902 թ. սեպտեմբերին, «Իսկրայում» տպագրված «Նամակ Բաքվից» հոդվածում, Բ. Կնունյանցը, խոսելով հիշյալ տեղաշարժերի մասին, գրել է, որ դրանցից հետո «համամարդկային շահերի մասին հիշատակությունը կհնչեր որպես ականջ ծակող ու ծիծաղելի դիսոնանս՝ նախասկզբնական կուտակման ասպետների այս թագավորությունում»[9]։ Բացատրելով իր միտքը, նա Բաքվի ազգաբնակչության օրինակով ցույց է տալիս, որ կապիտալիստական հարաբերություններն ունեն իրենց օրինաչափությունները, որոնց հետ հաշվի չնստել· կամ որոնք շրջանցել չի կարելի։ Այսպես, երբ նավթային բումն անցավ, «բնակչության միջին և ցածր խավերը կորցրին արագ հարստանալու պատրանքները, իսկ տխուր իրականությունը՝ ծառայողներին աշխատանքից ազատելու, ռոճիկը իջեցնելու և այլնի ձևով սկսեց երևան գալ չափազանց զգալիորեն»[10]։ Մյուս կողմից՝ «հարստություն դիզելու տենդին համապատասխանում էր ճնշված աշխատավոր բնակչության խուլ դժգոհությունը, որին ծայրահեղ աղքատությունից, տառապանքներից ու խեղումներից բացի ոչինչ բաժին չի ընկնում»[11]։ Բ. Կնունյանցի կարծիքով, այս ամենը պարտավոր էր նկատել ու իր վերաբերմունքը ցույց տալ «Մշակը», եթե այն իրեն համարում էր հասարակական կարծիքի արտահայտիչը։ Նա պարտավոր էր հաշվի առնել, որ «կյանքը փոխվում էր. նոր հարցերը փոխարինում էին հներին, նոր պայմաններն առաջադրել էին նոր խնդիրներ։ Դրան համապատասխան պետք է փոխվեր նաև օրգանի ծրագիրը»[12]։ Մինչդեռ «Մշակը» շարունակում էր պարծենալ իր հին սովորություններով, Գ. Արծրունու ավանդություններին հավատարիմ ու հետեվողական լինելու հանգամանքով։ Այդ բոլորի հետևանքով լրագիրը ետ էր մնում և բնականաբար, շահում էր «ընթերցողի անտարբեր վերաբերմունքը»։ Բ. Կնունյանցը գտնում էր, որ կյանքն այնքան հարուստ է նոր երևույթներով, դեպքերով, հասարակության քննարկմանը ներկայացվող հարցերով, որ «Մշակը», եթե փորձեր լուսաբանել դրանք, գլուխը կկորցներ նյութի հարստությունից։ Իսկ դա տեղի չունեցավ։ Հավատարմությունը «հին ծրագրին» իջեցրեց թերթի մակարդակը։ «Նայեցեք վերջին տարիների համարները. բովանդակության ինչպիսի՞ աղքատություն, ինչպիսի՞ մակերեսայնություն, ավելի ճիշտ՝ ինչպիսի՞ վախկոտություն այս կամ այն հարցը լուծելիս»[13],— գրում էր Բ. Կնունյանցը։

---

8 Նույն տեղում։
9 Նույն տեղում, էջ 27։
10 Նույն տեղում, էջ 28։
11 Նույն տեղում, էջ 27—28։
12 Նույն տեղում, էջ 33։
13 Նույն տեղում, էջ 34։

Հետաքրքիր է այդ հոդվածում նաև «Նոր դարին» տրված գնահատականը։ Ինչպես ասվեց, լինելով ազգային-պահպանողական հոսանքի օրգանը, թերթը կապիտալիզմի վերընթաց երթի շրջանում պաշտպանում էր արհեստավորության և ընդհանրապես մանր բուրժուազիայի շահերը։ «Նոր դարի» շրջանակի գործիչներն ընդվզում էին կապիտալիզմի բերած չարիքների դեմ և քննադատում բուրժուական հասարակության հակասությունները»[14]։ Հիշյալ խավերի քայքայման փաստը նրանք նույնացնում էին ազգի «միասնությանը» հասցրած վնասների հետ և ձգտում էին պահպանել այդ «միասնությունը», հենվելով եկեղեցու, ազգային դպրոցի ու մշակույթի վրա։ Ազգային-պահպանողական հոսանքի ծրագրային դրույթների արտահայտիչներն էին «Փորձ» ու «Արձագանք» հանդեսները, «Մեղու Հայաստանի» և «Նոր դար» լրագրերը։ Վերջինս գտնվում էր հոսանքի աջ թևում և հաճախ ենթարկվում էր առաջադեմ մտավորականների քննադատությանը։ Բ. Կնունյանցի հոդվածում հենց տեղ է գտել այդ բանը։ «Կղերականության ոգին, ամեն մի հետամնացի պաշտպանությունը, հարձակումները եվրոպական կուլտուրայի դեմ, ամենահետադիմական իմաստով ազգային ինքնօրինակությունը պահպանելու ցանկությունը՝ ահա այն գաղափարները, որ քարոզում է «Նոր դարը», որի շուրջը խմբավորվել են մեր հասարակության բոլոր պահպանողական տարրերը»[15]։

Բ. Կնունյանցի՝ հեղափոխականի և պրոլետարական շարժման ղեկավար գործչի համար ամենակենսականը և անհրաժեշտը հասարակական այն ուժերն էին և մամուլի այն օրգանները, որոնք հասկանում էին ժամանակի ոգին և պրոպագանդում նոր ձևավորվող դասակարգի առաջավոր գաղափարախոսությունն ու պայքարի նպատակները։ «Ունենալ այնպիսի անգույն օրգան,— գրում էր նա լիբերալ «Մշակի» մասին,— որը ոչինչ նոր բան չի տալիս, հասարակական միտքը չի արթնացնում, օպորտունիստորեն է վերաբերվում մեր հասարակայնության ամենախոշոր երևույթներին, միանգամայն անօգուտ է»[16]։

Ինչպես հայտնի է, հեղափոխական մի խումբ երիտասարդներ և մտավորականության առաջավոր ներկայացուցիչներ, վերջիններից էր և Ա. Շիրվանզադեն, պաշտպանում էին Բ. Կնունյանցի դիրքը և միանալով նրան՝ քննադատում էին «Մշակի» որդեգրած վախկոտ ու լիբերալ վարքագիծը։

Դարասկզբի հայ հասարակական-քաղաքական կյանքի չափազանց կարևոր հարցերին է նվիրված Բ. Կնունյանցի՝ «Իսկրայում» տպագրված «Նոր թալան» խորագրով հոդվածը։ Այդ հոդվածի գլխավոր նպատակն էր մերկացնել ցարիզմի ազգային քաղաքականությունը, ծայրամասերը կամ գաղութները վերջնականապես իրեն ենթարկելու և հնազանդեցնելու ցարական կառավարության ձգտումը։ Հեղինակը նշում է, որ սոցիալ-դեմոկրատիայի գլխավորությամբ հեղափոխական շարժման վերելքի պայմաններում այդ քաղաքականության ամեն մի արտահայտություն հանդիպում էր լուրջ դիմադրության։ Այդ բանը մենք տեսնում ենք հայ եկեղեցու գույքը բռնագրավելու մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հրապարակման կապակցությամբ։ «Արդեն մոտ

---

14 Մ. Հ. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976, էջ 27։

15 Բոգդան Կնունյանց, Ընտիր երկեր, էջ 31—32։

16 Նույն տեղում, էջ 35։

վեց տարի է (1898 թվականից),— գրում է Բ. Կնունյանցը,— ինչ կառավարությունը փայփայում է այդ օրենքը, բայց երկյուղ կրելով Կովկասում հնարավոր խռովությունից... ձգձգում էր գրա հրապարակումը»[17]։ Բայց այս անգամ հենց հեղափոխական նոր ալիքը խեղդելու նպատակով ցարական կառավարությունը որոշում է փորձել իր ուժը։ Օրենքի հրապարակ գալուց անմիջապես հետո պայթում է ժողովրդական զայրույթը։ «Ամենախուլ վայրերից լուրեր են գալիս կառավարության հետ զինված ընդհարումների մասին, մասսայական ցույցերի, միտինգների և այլնի մասին»[18],— գրում է Բ. Կնունյանցը։ Նա այդ դեպքերը գնահատում է որպես Անդրկովկասը համակած «հեղափոխական փոթորիկ»։ Անշուշտ, հեղինակը հեռու էր այն մտքից, որ փոթորկի պատճառը միայն հիշյալ օրենքն է։ Նա թվարկում է բոլոր այն երևույթները, որոնք լցրել էին ժողովրդի համբերության բաժակը։ «Մշակութային խաղաղ հիմնարկների սիստեմատիկ հետապնդումները,— գրում է նա,— տխրահռչակ «ռուսականացման քաղաքականությունը», 300-ից ավելի հայկական դպրոցների փակումը, բարեգործական հիմնարկների գործունեության սահմանափակումը, հրատարակչական ընկերության փակումը, մի ամբողջ շարք նման այլ միջոցառումներ հայ բնակչության և կառավարության միջև կամաց-կամաց ստեղծում էին խիստ հակամարտություն, որը վաղ թե ուշ պետք է պայթեր»[19]։ Դրա համար, հեղինակի կարծիքով, վճռական նշանակություն ունեցավ բանվորական զանգվածների հերոսական պայքարը կովկասյան արդյունաբերական կենտրոններում, պայքար, որն օրինակ ծառայեց մասսաների համար թե՛ քաղաքում և թե՛ գյուղում։ «Մի ամբողջ շարք հաջող ցույցերը, մասսայական լայն ագիտացիան, վերջապես այս ամառվա նշանավոր ընդհանուր գործադուլները,— գրել է Բ. Կնունյանցը,— խիստ հեղափոխականացրին բնակչության բոլոր խավերին»[20]։

Այնուհետև Բ. Կնունյանցը ցույց է տալիս, որ եկեղեցական գույքը և նրանից ստացված եկամուտները որոշ չափով ու ժողովրդի ընտրած մարդկանց միջոցով ծառայում էին մշակութային կարիքներին, ծխական դպրոցներին։ Օրենքը ժողովրդին զրկում էր այդ միջոցներից, իսկ հոգևորականությանը դարձնում պետությունից աշխատավարձ ստացող ծառայողներ։ Այսպիսով հասարակության բոլոր խավերի շահերին հասցվում էր լուրջ հարված։ Սակայն նրա ուժը և հետևանքները առանձին խավերի վրա տարբեր ձևով էին անդրադառնում։ Դրանով էլ պայմանավորված էր այդ խավերի դիրքավորումը համաժողովրդական պայքարի ասպարեզում։ Բ. Կնունյանցը դիպուկ կերպով սահմանազատում է առանձին խմբերի բռնած դիրքը. «հոգևորականությունը օրենքը բացատրում է ինքնավար հայկական եկեղեցին ոչնչացնելու և այն ուղղափառ (եկեղեցու) ազդեցությանը ենթարկելու կառավարության ցանկությամբ և մղում է իր առանձին ագիտացիան։ Նացիոնալիստները իրենց թռուցիկներում կոչ են անում պայքարել հանուն ոտնահարված ազգային իրավունքների, հանուն ամբողջ ազգին հասցրած վիրավորանքի»[21]։ Բոլորը տրամադրված էին պայքարել ցարիզմի դեմ։ Սակայն միայն սոցիալ-դեմոկրա-

17 Նույն տեղում, էջ 76։
18 Նույն տեղում, էջ 75։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում, էջ 76։
21 Նույն տեղում, էջ 77։

տիան էր մղում բանավոր ու գրավոր ագիտացիա հանուն այն բանի, որպեսզի օգտագործվի ընդհանուր դժգոհությունը և «այն հեղափոխական հունով ուղղվի կառավարության դեմ»[22]։

Հեղինակը նկարագրում է պայքարի առանձին դրվագներ հուլիս-սեպտեմբեր ամիսներին և ցույց է տալիս, որ որոշ տեղերում դրան մասնակցում էին տեղական բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները, որ ցարիզմի դեմ ժողովուրդը կռվի էր ելել ամենուր՝ Երևանում, Կարսում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Ելիզավետպոլում (Գանձակ), Շուշիում, Բաքվում և այլուր։ Բ. Կնունյանցն ընդգծում էր Կովկասյան միութենական կոմիտեի դերն այս շարժման մեջ, նշելով, որ նրա թռուցիկները ցրվում էին բոլոր միտինգների ու հավաքույթների ժամանակ և «Կորչի՛ ինքնակալությունը», «Փողո՛ց, ընկերնե՛ր, փողո՛ց», «Փա՛ռք զոհված մարտիկներին» և այլ կոչերով ոտքի ելածներին պայքարի մղում ցարիզմի դեմ։ Ի վերջո, նա գոհունակությամբ գրում է, որ «այդ դեպքերի ժամանակ մեր թռուցիկները թափանցել են Կովկասի բոլոր անկյունները, որտեղ միայն կա հայ բնակչություն և մոտ ժամանակում մեզ կհաջողվի կազմակերպել այնտեղ մեր խմբակները»[23]։

«Իսկրան» բարձր է գնահատել Կովկասի հեղափոխականների ցուցաբերած կուսակցական ու քաղաքական գիծը հիշյալ դեպքերի ընթացքում։ Թերթի հատուկ խմբագրական հոդվածում ընդգծվում էր, որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան ձգտում է «խոսքի, խղճի և միությունների, բոլոր ու ամեն տեսակ միությունների, հետևաբար, այդ թվում և եկեղեցական միությունների լիակատար ազատություն։ Մենք պաշտպանում ենք յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունքը և, հետևաբար, պետք է անպայման հանդես գանք միայն հայերին վերաբերող գործերի մեջ ինքնակալության բռնի ներխուժման դեմ»[24]։ Ցարիզմի դեմ մղվող պայքարում հեգեմոնիա ապահովելու համար, գրում է թերթը, մենք պետք է պայքարենք վերևից եկող ամեն մի բռնության դեմ և այդպիսով ապահովենք մեր ազդեցությունը ժողովրդի մեջ։ Ահա այս կապակցությամբ «Իսկրան» «կովկասցի մեր ընկերների» վարքագիծը համարում է ճիշտ և գրում, որ նրանք «իրենց օրինակով ցույց տվեցին, թե ընդհանրապես սոցիալ-դեմոկրատիան ինչպես պետք է վերաբերվի ամեն մի նման երևույթի նկատմամբ»[25]։

Ս. Շահումյանի, Բ. Կնունյանցի և ընդհանրապես հայ բոլշևիկների համար չափազանց կարևոր է եղել ազգային և պրոլետարական շարժման խնդիրների ճիշտ ըմբռնումն ու խելացի համատեղումը, դրանք միմյանց չհակադրելը։ Հեղափոխական վերելքի բոլոր փուլերում Բ. Կնունյանցը եղել է իր բարձրության վրա, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերում։ 1905 թ. մարտին դատարանում արտասանած իր հայտնի ճառում նա ասել է. «մեզ՝ սոցիալ-դեմոկրատներիս համար ազգային տարբերությունները ոչ մի դեր չեն խաղում, որ մենք մեր ձգտումներում ելնում ենք ոչ թե այս կամ այն ազգային դրդապատճառից, այլ պրոլետարիատի ճիշտ ըմբռնված դասակարգային շահերից, որոնք մեր համոզմամբ միասնական են ամբողջ աշխարհի պրոլետարների համար»։ Իր միտքը նա ամփոփել է հետևյալ խոսքերով՝ «քաղաքական

22 Նույն տեղում, էջ 78։
23 Նույն տեղում, էջ 85։
24 Նույն տեղում, էջ 84։
25 Նույն տեղում։

իրադարձությունների գնահատման մեջ սոցիալիստի ազգային ծագումը ոչ մի ազդեցություն չունի»[26]։

Հենց վերոհիշյալ դիրքերից էլ Բ. Կնունյանցը մոտեցել է հայկական հարցին կամ Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության վիճակի վերլուծմանը։ Այսպես, «Իսկրայում» 1902 թ. աշնանը լույս տեսած առաջին հոդվածում, նկարագրելով նավթարդյունաբերության վերելքի կապակցությամբ տնտեսական ու քաղաքական կյանքի աշխուժացումը 1890-ական թվականներին և մեր գարասկզբին, նա կանգ է առնում սոցիալական խավերի և աղգությունների փոխհարաբերությունների վրա՝ ցույց տալով հեղափոխական շարժման ծավալման ազդեցության հետևանքով դրանց բյուրեղացման պրոցեսը և այս ընդհանուր ֆոնի վրա նշում է, որ «միայն անողոք գազանությունները Թուրքահայաստանում ժամանակավորապես հուզեցին բնակչության հայկական մասին, և հայ ազգային հեղափոխական պրոպագանդան ունեցավ ժամանակավոր հաջողություն, որին աջակցեց հայոց լեզվի և հայ ազգության դեմ ռուսական կառավարության սկսած հալածանքների դարաշրջանը»[27]։ Մեկ տարի անց նա ՌՍԴԲԿ II համագումարի պատվիրակների ուշադրությունը հրավիրում է հայկական հարցի վրա, անհրաժեշտ գտնելով Բաքվի կոմիտեի զեկուցման մեջ «փոքր ինչ ավելի հանգամանորեն» կանգ առնել հիշյալ խնդրի վրա։ «Քաղաքական այն ծանր պայմանները,—ասում էր Բ. Կնունյանցը,—որոնցում ապրում են երեք միլիոն հայեր Թուրքիայում, բարբարոսական [հալածանքները], մասսայական կոտորածներն ու ջարդը, որ մի քանի անգամ (Թուրքական կառավարության դրդմամբ—Հ. Ի.) կատարել էին քրդերը Փոքր Ասիայում, չէին կարող չգրավել ռուսահպատակ հայերի, հատկապես մտավորականության ռադիկալ մասի ուշադրությունը»[28]։

«Թուրքիայի իրադարձությունների շուրջը» հոդվածում ևս նա ընդգծում է, որ Թուրքիայի «հասարակական կյանքում ամենալուրջ հակասությունները մինչև այժմ առաջանում էին ազգային բախումներից»[29]։ Ազգային, և մասնավորապես հայկական, հարցի լուծումը նա տեսնում էր հեղափոխական շարժման հաղթանակի մեջ և գտնում էր, որ այդ իմաստով առաջնային են պրոլետարիատի պայքարի կազմակերպման ու ղեկավարման խնդիրները։ Արևմտահայության ազատագրումը նա համարում էր կենսական անհրաժեշտություն և համակրանքով նշում, որ «հայ լավագույն լեգալ դրականությունը գովերգում էր Թուրքահայերի քաղաքական ազատագրության գաղափարը»[30]։

Խստորեն քննադատելով Թուրքիայի տիրող շրջանների գազանաբարո քաղաքականությունը, Բ. Կնունյանցն աշխատում էր մեկնաբանել հայ ազգային կուսակցությունների տակտիկան ու գործունեությունը, կուսակցություններ, որոնք արդեն գոյություն ունեին 15—20 տարի և իրենց հիմնական խնդիրն էին համարում պայքարը սուլթանիզմի դեմ, չխորշելով պայքարի անկազմակերպ, տեռորիստական և անհատական ձևերից։ Ահա այս պատճառով էլ, Բ. Կնունյանցի կարծիքով, Սասունի դեպքերից հետո, մասնավորապես դաշնակցությունը «տեսանելի բեմից իջավ... որպես գործողության կուսակցություն...»[31]։

26 Նույն աշխատ., էջ 117։
27 Նույն տեղում, էջ 27։
28 Նույն տեղում, էջ 572—573։
29 Նույն աշխատ., էջ 542։
30 Նույն տեղում, էջ 573։
31 Նույն տեղում, էջ 27։

Միաժամանակ նա նշում է, որ այդ կուսակցությունները երկու դարերի սահմանագծում ազդեցություն ունեին մտավորականության և ուսանողության վրա։ «Եվ ահա, բնակչության բոլոր խավերում այդ կուսակցությունների տիրապետության պայմաններում երևան եկան սոցիալ-դեմոկրատները...։ Զարմանալի չէ, որ նացիոնալիստները նրանց դիմավորեցին ոչ միայն թերահավատությամբ, այլև թշնամաբար»[32]։ Մինչդեռ սոցիալ-դեմոկրատները քարոզում էին համատեղ դասակարգային պահանջների, ցարիզմի տապալման ու պրոլետարական հեղափոխության հաղթանակի անհրաժեշտությունը, նացիոնալիստներն ամեն ջանք գործ էին դնում, որպեսզի լռության մատնեն «Ռուսաստանի սահմաններում քաղաքական պայքարի գաղափարը» և բոլոր ուժերով աշխատում էին բանվորներին և երիտասարդությանը համոզել, որ «Կովկասում հեղափոխական գործունեությամբ զբաղվելը նշանակում է ազգային դատին դավաճանել, որ ամբողջ եռանդը հարկավոր է ուղղել ամենից առաջ «հայկական հարցի» լուծմանը, իսկ հետո արդեն անցնել ռուսահպատակ հայերի ճակատագրին»[33]։ Այդ տեսակետն իշխող էր թե՛ դաշնակցականների և թե՛ հնչակյանների շրջաններում։ Սակայն, նշում է Բ. Կնունյանցը, դրանց շարքերում կար մի թև, գործիչների մի ստվար խումբ, որոնք «սկզբունքորեն ամենևին չէին մերժում ինքնակալական կառավարության դեմ պայքարելու անհրաժեշտությունը»[34]։ Այնուհետև նա բավական մանրամասնորեն խոսում է սոցիալ-դեմոկրատների և նացիոնալիստների միջև շարունակվող պայքարի և այդ պայքարն առաջացնող խնդիրների մասին։ Հետաքրքրական է նրա եզրակացությունը վերջիններիս քաղաքական կողմնորոշման մասին։ «Նացիոնալիստները,— ասում է Բ. Կնունյանցը,— ավելի մեծ համակրանք են տածում դեպի սոցիալիստ-հեղափոխականները, քան դեպի մեզ, որոնք (սոցիալիստ-հեղափոխականները—Հ. Ի.) իրենց ավելի մոտ են պայքարի տակտիկայի նկատմամբ հայացքների ողջ ընդհանրությամբ»[35]։ Այդ հետևության մեջ նա ամրապնդվեց մանավանդ, երբ առաջին ռուսական հեղափոխության պարտությունից հետո, բազմաթիվ քաղաքական ու տակտիկական հարցերում անհրաժեշտ եղավ համագործակցել մանրբուրժուական այդ կուսակցությունների հետ։ Այդպիսին էր 1907—1908 թթ. Բաքվում անցկացվող «խորհրդակցական» կամպանիան։ Նավթարդյունաբերող ձեռնարկատերերը փորձում էին համատեղ խորհրդակցություններում հասնել իրենց նպատակներին՝ բանվորների ներկայացուցիչներին համոզելով վերջ տալու գործադուլներին և կարգավորելու իրենց փոխհարաբերությունները։ Բոլշևիկները 1907 թ. նոյեմբերին առաջադրեցին՝ «խորհրդակցություն երաշխիքներով, կամ ոչ մի խորհրդակցություն» պահանջը։ Այսինքն, հեղափոխական շարժման անկման պայմաններում նրանք ցանկանում էին օգտվել այդ լեգալ հնարավորությունից՝ հանուն պրոլետարիատի շահերի։ Իսկ այդ ժամանակ սոցիալիստ-հեղափոխականները և դաշնակցականները պահանջում էին բոյկոտի ենթարկել «խորհրդակցական» կամպանիան և, ինչպես գրում է Բ. Կնունյանցը, «մեզ մեղադրում են համարյա բանվորական գործին դավաճանելու մեջ։ Այդպիսի

32 Նույն տեղում, էջ 573։
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում, էջ 574։
35 Նույն տեղում, էջ 575։

մեղադրանքին չի կարելի չպատասխանել, չնայած դրանք ելնում են ոչ պրոլետարական կազմակերպությունից»[36]։ Եվ նա «Գուդոկ» բոլշևիկյան թերթում լույս է ընծայում այդ հարցին նվիրված չորս հոդված, որոնցում ցույց է տալիս էսէռների ու դաշնակցականների մեղադրանքների անհիմն լինելը։ Վերջիններս «խորհրդակցական» կամպանիան գնահատում էին որպես փորձ՝ տանելու բանվորներին «կապիտալիստների հետ խաղաղ գործարքների ուղին», հաշտեցնելու աշխատանքը կապիտալի հետ։ Այդ բանը համարելով անհուսալի գործ, Բ. Կնունյանցը դրում էր. «Մեր շահերը և կապիտալի շահերն այնքան են հակադիր իրար, որ հարկ անգամ չկա խոսել նրանց հաշտության մասին։ Անհաշտ պայքար՝ ահա մեր փոխադարձ հարաբերությունները։ Մղել այդ պայքարը, ղեկավարել այն՝ ահա մեր գլխավոր խնդիրները»[37]։ Իսկ ղեկավարելու համար անհրաժեշտ էր օգտագործել պրոլետարիատի նվաճած թե՛ լեգալ և թե՛ անլեգալ միջոցներն ու ձևերը, որպեսզի կապիտալիստները ստիպված լինեն զիջումներ կատարելու։

Դաշնակցականները դեմ էին դուրս գալիս կազմակերպված միջոցառումներին և կոլեկտիվ պայմանագիր կնքելուն։ «Բայց կազմակերպված պրոլետարիատը,— շարունակում է Բ. Կնունյանցը,— դաշնակցության նման հիմնարկությունների ամենաոխերիմ թշնամին է։ Նրանք լավ գիտեն, հենց որ ուժեղանան մարտական, զուտ բանվորական կազմակերպությունները, դաշնակցությունը կկորցնի իր ազդեցությունը մինչև այժմ վոշիացած հայ պրոլետարիատի վրա»[38]։ Հենց այդ պատճառով էլ դաշնակցությունը դեմ էր դուրս գալիս կազմակերպված պայքարին։ Իսկ մանր բուրժուան և նրա կուսակցությունները թե՛ արտադրության մեջ և թե՛ հասարակական-քաղաքական կյանքում իրենց էությամբ ու նպատակներով չեն կարող լինել կազմակերպվածության, միասնականության կողմնակից։ Սակայն որպեսզի պահպանեն իրենց ազդեցությունը մասսաների վրա, այդ կուսակցությունները շատ հաճախ են իրենց հայտարարել աշխատավորության շահերի պաշտպաններ։ Իսկ դաշնակցականներն այդ բոլորից բացի իրենց համարում էին սոցիալիստներ, որովհետև նոր էին «խցկվել ինտերնացիոնալի մեջ»։ «Դաշնակցականները շատ ու շատ վատ մի սովորություն ունեն,—գրում էր այնուհետև Բ. Կնունյանցը։—Նրանք սիրում են իրենց միաձուլել հայ պրոլետարիատի հետ։ Հենց որ ոչ դաշնակցականներից որևէ մեկը համարձակվի քննադատել նրանց տակտիկան... Նրանք իրենց վիրավորանքը փոխադրում են ողջ հայ պրոլետարիատի վրա։ Անմիջապես բարձրացվում է ազգային թշնամություն բորբոքելու, «պրովոկացիայի», կոտորածի հարցը և այլն։ Այդ ամենից վատ հոտ է փչում, և մենք դաշնակցականներին խորհուրդ կտայինք հրաժարվել այդ սովորությունից»[39]։

Բ. Կնունյանցն իր աշխատություններում զգալի տեղ է հատկացրել ազգայնական կուսակցությունների դեմ հայ բոլշևիկների մղած պայքարին և հանգամանալից կերպով ցույց է տվել, թե ինչպիսի դժվարություններ էին նրանք հաղթահարում իրենց ամենօրյա գործունեության ու պայքարի ընթացքում։ Նախ նա նշում էր, որ անհրաժեշտ էր ավելի փորձված, հեղինակություն

36 Նույն տեղում, էջ 502։
37 Նույն տեղում, էջ 503։
38 Նույն տեղում, էջ 512։
39 Նույն տեղում, էջ 510։

և ընդարձակ կապեր ունեցող նացիոնալիստների ազդեցությունից դուրս բերել ոչ միայն բանվորներին, գործակատարներին, ծառայողներին, այլև երիտասարդությանը։ Տիրող խավերը և մասնավորապես բուրժուազիան՝ դասակարգային պայքարը բթացնելու համար փորձում էին աշխատավորությանը ներշնչել, որ «ազգային շահերը դասակարգային շահերից ավելի բարձր են, որ մեկ ազգի տարբեր դասակարգերի կապն ու հարազատությունը ավելի սերտ են, քան տարբեր ազգությունների պրոլետարիատի շահերի համերաշխությունը...»[40]։ Բազմազգ Կովկասում և մանավանդ նրա բանվորական կենտրոններ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում և այլուր այդ քարոզը չափազանց լուրջ խոչընդոտ էր բանվորների դասակարգային միասնության առաջ։ Բ. Կնունյանցը հատկապես ընդգծում էր, որ նացիոնալիզմը որպես գործիք բուրժուազիայի ձեռքում «առանձին ուժ և սրություն է ստանում, երբ տնտեսական շահերի հակամարտությունը բարդանում է քաղաքական գործոնի միջամտությամբ, երբ երկու կամ մի քանի ազգեր միմյանց նկատմամբ կանգնած են լինում հաղթողների և պարտվածների հարաբերության մեջ»[41]։ Իսկ ցարական Ռուսաստանի իրականությունը տալիս էր բազմաթիվ նման օրինակներ։

Կովկասում ազգային հարցի առաջին մարքսիստ-տեսաբաններից մեկը՝ Բ. Կնունյանցը, գտնում էր, որ «միայն սոցիալիզմի գաղափարը կարող է հակազդել տարբեր ժողովուրդների բանվորական մասսաների փոխադարձ թշնամությանն ու անվստահությանը»[42]։ Նա գոհունակությամբ էր նշում, որ երկրամասում կուսակցական կազմակերպությունների ագիտացիայի և ամենօրյա աշխատանքի շնորհիվ որոշակի քայլ է կատարվել հարևան ազգերի մերձեցման ասպարեզում։ Ինտերնացիոնալ բնույթի կազմակերպությունների առկայությունը և գործունեությունը հասցրել է այն բանին, գրում էր Բ. Կնունյանցը, որ «ռուսը տարածում և պատերին էր փակցնում հայերեն ու վրացերեն թռուցիկներ. հայ բանվորը ագիտացիա է մղում ադրբեջանցիների շրջանում, վրացի գրաշարը տպագրում է ռուսերեն թերթիկներ, և նրանք բոլորը միասին, համատեղ մշակում էին գործողությունների պլան»[43]։ Եզրակացությունն այն է, որ ազգային անջատվածությունը կամ սահմանափակությունը, ընդհանուր ազգամիջյան շահերի անտեսումը, առաջին հերթին վնաս է բերում հենց տվյալ ազգին, մանավանդ եթե նա փոքրաթիվ է ու ցրված և ապրում է ռեակցիոն կարգերի տիրապետության պայմաններում։ Այդ դեպքում «միամտություն կլիներ հուսալ», որ որևէ մեկը կհարգի «փոքր ժողովրդի իրավունքը»[44]։

Վերլուծելով հայ ժողովրդի վիճակը դարասկզբին, Բ. Կնունյանցը կանգնած է եղել մարքսիստական այն տեսակետի վրա, որ ամեն մի ժամանակակից ազգի, նաև հայ ժողովրդի, առաջատար ուժը պրոլետարիատն է և նրա կուսակցությունը, որ բանվոր դասակարգի ինտերնացիոնալ միասնությունն է այն ուղին, որը կապահովի ժողովուրդների վերընթաց երթը դեպի սոցիալիզմ։ Բ. Կնունյանցը կուսակցության յուրաքանչյուր անդամին համա-

40 Նույն տեղում, էջ 90։
41 Նույն տեղում, էջ 90։
42 Նույն տեղում, էջ 91։
43 Նույն տեղում, էջ 92—93։
44 Նույն տեղում, էջ 548—549։

բել է «ամբողջ Ռուսաստանի, ամբողջ պրոլետարիատի ներկայացուցիչը» և համոզված հայտարարել, որ «ռուս պրոլետարիատը բոլոր ազգությունների համար ճանաչում է ինքնորոշման իրավունք և միշտ պայքարելու է շահագործման բոլոր ձևերի դեմ»[45]։

Բ. Կնունյանցը համառուսաստանյան մասշտաբի գործիչ էր, բայց ամենուր, որտեղ նա աշխատել ու գործել է և երբ անհրաժեշտ է եղել, նա խոսել է իր ժողովրդի մասին, ներկայացրել նրա անցյալն ու ներկան, ինտերնացիոնալիստական դիրքերից պաշտպանել նրա շահերը, պայքարել նրա լուսավոր ապագայի համար։

АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ НАЧАЛА XX ВЕКА В ОЦЕНКЕ Б. КНУНЯНЦА

ОГАНЕС ИНДЖИКЯН

Резюме

В произведениях одного из представителей ленинской гвардии революционных деятелей Б. Кнунянца нашли отражение общественно-политическая жизнь армян и деятельность ряда армянских политических организаций и партий. В них анализируются конкретная обстановка на Кавказе накануне первой русской революции, межнациональные отношения в крае и критикуется окраинная, национальная политика царизма. На этом общем фоне исторических событий Б. Кнунянц излагает и пропагандирует стратегические и тактические принципы РСДРП, рассказывает о деятельности Кавказского Союзного и местных большевистских комитетов, разрабатывает некоторые теоретические положения марксизма по национальному вопросу. Он подвергает резкой критике позицию местных националистов, показывая жизненную важность интернационалистической работы в многонациональном Закавказье.

В произведениях Б. Кнунянца определенное внимание уделяется также судьбе западных армян и вопросам борьбы всех прогрессивных сил за их освобождение от кровавого султанского ига.

---

45 *Նույն տեղում, էջ 140։*